ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 43-Լ

«02» 06 2023 թ.Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և նույն վարչության ավագ դատախազի 1 հաստիք ավելացնելու, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության ավագ դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և նույն վարչության դատախազի 1 հաստիք ավելացնելու, ինչպես նաև Երևան քաղաքի դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և նույն դատախազության ավագ դատախազի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանի 1-ին հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 2-րդ բաժնի 6-րդ գլխի 19-րդ կետում «Վարչության

ավագ դատախազ 4» բառերը փոխարինել «Վարչության ավագ դատախազ 5», իսկ «Վարչության դատախազ 4» բառերը՝ «Վարչության դատախազ 3» բառերով:

2. Հավելվածի 2-րդ բաժնի 14-րդ գլխի 51-րդ կետում «Վարչության ավագ դատախազ 2» բառերը փոխարինել «Վարչության ավագ դատախազ 1» բառերով, իսկ 52-րդ կետում «Վարչության դատախազ 6» բառերը՝ «Վարչության դատախազ 7» բառերով:

3. Հավելվածի 3-րդ բաժնի 16-րդ գլխի 59-րդ կետում «Դատախազության ավագ դատախազ 9» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 10» իսկ 60-րդ կետի «Դատախազության դատախազ 10» բառերը՝ «Դատախազության դատախազ 9» բառերով:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին ու դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ